ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ **2021** ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԲԱԺԻՆ

2021 թվականի ընթացքում համապատասխան աշխատանքներ են իրականացվել ՀՀ Շիրակի մարզպետարանի, պետական կառավարման համակարգի մարմինների ու վերջիններիս տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցության և փոխհամաձայնեցված գործողությունների ապահովման նպատակով:

➢ Հրավիրվել և անցկացվել է մարզի խորհրդի թվով 3 նիստ (06.04.2021թ.,16.07.2021թ. և 24.12.2021թ.): Նիստերի ընթացքում ներկայացվել են մարզպետարանի ստորաբաժանումների կողմից համապատասխան բնագավառներում իրականացված աշխատանքները, քննարկվել են մարզի համայնքների բնականոն գործունեության կազմակերպմանը վերաբերող մի շարք հարցեր, հայտարարություններով հանդես են եկել պետական կառավարման մարմինների մարզային ստորաբաժանումների ղեկավարները: Վարչության կողմից պատշաճ կարգով իրականացվել են մարզի խորհրդի նիստերի հրավիրման հետ կապված կազմակերպչական հարցերն ու նիստերի արձանագրումը:

➢ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 1-ի «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2021 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1776-Ա և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 9-ի «Տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության հարցաշարը հաստատելու և Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2014 թվականի մարտի 3-ի N 11-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 03-Ն հրամանների ու դեկտեմբերի 2-ի թիվ ՍՊ/20.1/33534-2020 հանձնարարականի՝ 2021 թվականին ապահովվել է ծրագրով նախատեսված մարզի թվով 14 համայնքների, այդ թվում՝ **Գյումրի, Հոռոմ, Հայկավան, Հովտաշեն, Նոր Կյանք, Մեծ Մանթաշ, Բայանդուր, Սարալանջ, Անուշավան, Ղարիբջանյան, Գետափ, Աշոցք, Պեմզաշեն և Նահապետավան** համայնքների տեղական

ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության իրականացումը:

Իրավական հսկողության արդյունքները քննարկվել են համայնքների ավագանիների նիստերում, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումները և դրանց վերացման ուղղությամբ արված առաջարկությունները համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվել են ամբողջությամբ, իսկ հսկողություն իրականացրած պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ համայնքների ղեկավարների կողմից առարկություններ չեն ներկայացվել:

Համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կազմվել և գործողության մեջ են դրվել արձանագրված խախտումները վերացնելու ժամանակացույցեր, համաձայն որոնց սահմանված ժամկետներում խախտումներն ամբողջությամբ վերացվել են:

Իրավական հսկողության իրականացման ընթացքում անհրաժեշտ խորհրդատվություն է տրամադրվել տեղական ինքնակառավարման մարմիններին՝ իրենց լիազորությունների իրականացման հարցերի վերաբերյալ:

➢ Գործող օրենսդրությամբ՝ ներկայում առաջնահերթ է համարվում համայնքներում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման աշխատանքները, հատկապես այն ոլորտներում, որտեղ դրանց կիրառումն առավել արդյունավետ է ժամանակային ծախսերի կրճատման, կառավարման թափանցիկության ու վերահսկելիության ավելացման առումով: Այդ նպատակով միջոցներ են ձեռնարկվել մարզի 42 համայնքներից 37-ում ներդրված համայնքային կառավարման տեղեկատվական համակարգերի անխափան շահագործումն ու ՀՀ պետական կառավարման մարմիններում գործող «Mulberry» համակարգի հետ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունն ապահովելու և մարզի համայնքներում համացանցային պաշտոնական կայքերի անխափան շահագործումն ապահովելու ուղղությամբ:

Մարզպետարանի պաշտոնական համացանցային կայքի և ՁԼՄ-ների միջոցով համայնքներին իրազեկվել են տեղական ինքնակառավարման ոլորտին առնչվող իրավական ակտերի, դրանցում կատարվող փոփոխությունների ու լրացումների մասին:

Հաշվի առնելով տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության և ընթացիկ բարեփոխումների վերաբերյալ հանրային ուշադրությունը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման ոլորտում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների կողմից պարբերաբար իրականացվող մշտադիտարկումների առկայությունը, միջոցներ են ձեռնարկվել մարզի 10000 և ավելի բնակիչ ունեցող համայնքներում՝ ավագանու նիստերի կամ հանրային նշանակության այլ միջոցառումների առցանց հեռարձակումներն անխափան իրականացնելու, ինչպես նաև մարզի 3000 և ավելի բնակիչ ունեցող համայնքներում համայնքապետարանների պաշտոնական համացանցային կայքերի մշտական հասանելիությունն ապահովելու և ՀՀ օրենսդրությամբ սահմանված բովանդակությամբ համալրելու ուղղությամբ:

Մարզի 3000 և ավելի բնակիչ ունեցող համայնքների համայնքապետարանների պաշտոնական համացանցային կայքերի մշտական հասանելիությունն ու դրանց՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված բովանդակությամբ համալրումն ապահովելու համար, պարբերաբար իրականացվել են մշտադիտարկումներ և արդյունքները եռամսյակային կտրվածքով ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

➢ 2021 թվականի ընթացքում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ընթացակարգին համապատասխան, ուսումնասիրվել են մարզպետարան առաքված՝ համայնքների ավագանիների թվով **1301** որոշումների

համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը: Թվով **676** (51.9%) ոչ իրավաչափ որոշումների վերաբերյալ կազմվել են առարկություններ և ուղարկվել համապատասխան համայնքներ: Արդյունքում՝ ապահովվել է նշված իրավական ակտերի համապատասխանեցումը ՀՀ օրենսդրությանը:

ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

2021 թվականի հունիսի 20-ին անցկացվել են ՀՀ ԱԺ-ի, հոկտեմբերի 17-ին Գյումրի համայնքի ավագանու և դեկտեմբերի 5-ին Արթիկ, Ախուրյան, Աշոցք, Ամասիա համայքների ավագանիների ընտրություններ: Ընտրություններ չեն անցկացվել միայն Անի միավորված համայնքում: ՏԻ մարմինների ընտրություններից հետո մարզում համայնքների թիվը 6-ն է:

Ներկայում նոր կազմավորված համայնքներում ընթացքի մեջ են ավագանիների գործունեության կազմակերպման, նոր աշխատակազմերի ձևավորման, բյուջեների նախագծերի կազմման և ավագանու հաստատմանը ներկայացման, բնակավայրերում մատուցվող ծառայությունների բնականոն և շարունակական ընթացքի ապահովմանն ուղղված աշխատանքները:

Վարչության աշխատակիցները մշտական կապ են պահպանում նոր ստեղծված համայնքների ղեկավարների հետ, գրեթե ամենօրյա ռեժիմով մեթոդական ու խորհրդատվական աջակցություն է ցուցաբերվում համայնքներին՝ վերը նշված գործընթացների կազմակերպման սահուն ընթացքն ապահովելու նպատակով:

Մինչև օրենքով սահմանված կարգով համայնքների նորընտիր ավագանիների լիազորությունների ստանձնումը, ՀՀ վարչապետի որոշումներով Գյումրի և Արթիկ համայնքներում և ՀՀ Շիրակի մարզպետի համապատասխան որոշումներով մարզի թվով 24 համայնքներում (Ամասիա, Արփի, Սարապատ, Ազատան, Առափի, Սարալանջ, Սարատակ, Արևշատ, Լեռնակերտ, Հայկասար, Հայրենյաց, Հոռոմ, Մեծ Մանթաշ, Մեղրաշեն, Նոր Կյանք, Փանիկ, Փոքր Մանթաշ, Բենիամին, Գետք, Երազգավորս, Հայկավան, Ղարիբջանյան, Ոսկեհասկ, Վարդաքար) նշանակվել են համայնքների ղեկավարների պաշտոնակատարներ:

ՀՀ Շիրակի մարզպետի 2021 թվականի օգոստոսի 17-ի N 246-Ա որոշմամբ նշանակվել և հոկտեմբերի 17-ին անցկացվել է Գյումրի համայնքի ավագանու հերթական ընտրությունը՝ համամասնական ընտրակարգով:

ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 1637-Ն որոշմամբ նշանակվել և դեկտեմբերի 5-ին անցկացվել են ՀՀ Շիրակի մարզի միավորված թվով 4 համայնքների (Արթիկ, Ախուրյան, Աշոցք, Ամասիա) ավագանիների ընտրությունները՝ համամասնական ընտրակարգով:

Վարչության կողմից անհրաժեշտ աշխատանքներ են տարվել օրենսդրությամբ ընտրական գործընթացներում մարզպետին և համայնքների ղեկավարներին վերապահված լիազորությունների իրականացումն ապահովելու ուղղությամբ: Ընտրությունների ժամանակացույցներով նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվել են սահմանված ժամկետներում:

Համայնքային ծառայություն, վերապատրաստումներ, կադրային ապահովում

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության նախաձեռնությամբ և նախարարի 2021 թվականի ապրիլի 7-ի թիվ ՍՊ//8375-2021 հանձնարարությամբ

տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով իրականացվել են համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների վերապատրաստումներ:

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հետ համատեղ կազմակերպվել և իրականացվել է մարզի թվով 17 համայնքների ղեկավարների և 46 ավագանու անդամների վերապատրաստման գործընթացը:

Սահմանված կարգով և ժամկետում վերապատրաստումների արդյունքների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն է ներկայացվել (գրություն՝ N 01//04271-2021, 17.05.2021թ.) ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի մեկ այլ՝ 2021 թվականի հունվարի 21-ի թիվ ՍՊ//1058-2021 հանձնարարությամբ հավաքագրվել և նախարարություն է ներկայացվել (գրություն՝ N 01//00879-2021, 02.07.2021թ.) ՀՀ Շիրակի մարզի համայնքապետարանների աշխատակազմերի 2020-2021 թվականներին վերապատրաստման ենթակա համայնքային ծառայողների ցուցակները:

Պլան-գրաֆիկով նախատեսված թվով 7 խմբերում ընդգրկված՝ 2020 և 2021 թվականներին վերապատրաստման ենթակա համայնքային ծառայողների հերթական վերապատրաստման գործընթացն իրականացվել է «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի հետ համատեղ՝ 2021 թվականի մայիսի 17-ից 27-ը, հունիսի 1-ից 11-ը, հունիսի 14-ից 24-ը և հուլիսի 6-ից 16-ը Գյումրի և Արթիկ համայնքներում (72-ժամյա ծրագրով): Ընդհանուր հաշվով, 2021 թվականին վերապատրաստվել են մարզի թվով 29 համայնքների 130 համայնքային ծառայողներ:

Վերապատրաստումների արդյունքների վերաբերյալ պարբերաբար տեղեկատվություն է ներկայացվել (գրություններ՝ N 01//04751-2021 01.06.2021թ., N 01//05152-2021 14.06.2021թ., N 01//05506-2021 24.06.2021թ., N 01//06072-2021 21.07.2021թ.) ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Մարզպետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ աշխատանքի արդյունքում 2021 թվականի ընթացքում համայնքային ծառայության մասին օրենսդրությամբ սահմանված կարգով մարզի թվով 12 (Գյումրի, Արթիկ, Ախուրյան, Մարմաշեն, Աշոցք, Մեղրաշեն, Պեմզաշեն, Գեղանիստ, Փոքր Մանթաշ, Գետափ, Վարդաքար, Ղարիբջանյան) համայնքներում անցկացվել են համայնքային ծառայության թվով 72 թափուր պաշտոնների համալրման համար հայտարարված մրցույթներ:

Ապահովվել է մրցույթների անցկացման անխափան ընթացքը, հրապարակայնությունն ու թափանցիկությունը: Մշտապես հետևողականություն է հանդես բերվել, որպեսզի մրցույթների հայտարարությունները տեղադրվեն ՀՀ հրապարակային ծանուցումների www.azdarar.am կայքում, համայնքապետարանների և մարզպետարանի պաշտոնական համացանցային կայքերում, փակցվեն համայնքապետարանների տեղեկատվական ցուցատախտակներին,

տեղադրվեն համայնքների և մարզպետարանի ֆեյսբուքյան պաշտոնական էջերում, ինչպես նաև միջոցներ են ձեռնարկվել մրցույթները օրենսդրության պահանջներին համապատասխան անցկացնելու ուղղությամբ:

Հայտարարված 72 մրցույթներից կայացել են 62-ը, 10-ը (Արթիկ 3, Ախուրյան 1, Մարմաշեն 1, Մեղրաշեն 2, Պեմզաշեն 2, Գետափ 1) չեն կայացել՝ դիմորդներ չլինելու պատճառով: Կայացած մրցույթների արդյունքում հաղթող է ճանաչվել 62 քաղաքացի, որոնք սահմանված կարգով նշանակվել են համապատասխան պաշտոններում:

Սահմանված ժամկետներում (մինչև ատեստավորումների անցկացումը) կազմվել և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն են ներկայացվել 2020-2021 թվականների ընթացքում մարզի թվով 28 (Արթիկ, Արևշատ, Արփի, Ամասիա, Անուշավան, Սարապատ, Աշոցք, Մարմաշեն, Երազգավորս, Գետք, Ոսկեհասկ, Ղարիբջանյան, Ազատան, Բենիամին, Բայանդուր, Հայկավան, Առափի, Գեղանիստ, Սարալանջ, Նահապետավան, Նոր Կյանք, Մեղրաշեն, Լուսակերտ, Պեմզաշեն, Լեռնակերտ, Գետափ, Հառիճ, Հովտաշեն) համայնքների համայնքապետարանների աշխատակազմերի ատեստավորման ենթակա 115 համայնքային ծառայողների ատեստավորման ժամանակացույցները:

Անցկացված մրցույթների, ատեստավորումների արդյունքների և մրցույթներին դիմած քաղաքացիների տվյալների վերաբերյալ համապատասխան գրություններով (N 01//01595-2021 26.02.2021թ., N 01//02584-2021 24.03.2021թ., N 01//03182-2021 09.04.2021թ., N 01//03289-2021 21.04.2021թ., N 01//04028-2021 06.05.2021թ., N 01//04310-2021 17.05.2021թ., N 01//04666-2021 31.05.2021թ., N 01//04848-2021 09.06.2021թ., N 01//05264-2021 16.06.2021թ., N 01//05413-2021 25.06.2021թ., N 01//05649-2021 30.06.2021թ., N 01//05948-2021 16.07.2021թ., N 01//06239-2021, N 01//06311-2021 և 01//06385-2021 27.07.2021թ., N 01//07154-2021 26.08.2021թ., N 01//07398-2021 03.09.2021թ., N 01//08252-2021 05.10.2021թ., N 01//08985-2021 03.11.2021թ.) ամբողջական տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Մարզի թվով 4 համայնքներում կազմակերպվել և անցկացվել են նաև համայնքային ենթակայության թվով 7 կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնների համալրման համար հայտարարված մրցույթներ:

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺԻՆ

Հաշվետու ժամանակահատվածում ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի, ՀՀ Շիրակի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների ու պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների միջև համագործակցված աշխատանքների կազմակերպման ուղղությամբ, որի արդյունքում ապահովվել է պաշտպանության, արտակարգ իրավիճակների, ոստիկանության և ազգային անվտանգության բնագավառներում օրենսդրությամբ պահանջվող աշխատանքների կատարումը:

ՕՊԵՐԱՏԻՎ ԻՐԱՎԻՃԱԿ

2021 թվականին ՀՀ Շիրակի մարզում արձանագրվել է հանցագործության 1183 դեպք (2020թ. նույն ժամանակահատվածում՝ 1259): Նախորդ տարվա համեմատությամբ դեպքերը նվազել են 76-ով (6,4%):

2021 թվականի ընթացքում մարզում արձանագրվել է 630 արտակարգ դեպք (2020թ. նույն ժամանակահատվածում՝ 546): Նախորդ տարվա համեմատությամբ դեպքերն աճել են 84-ով (15,3%):

2021 թվականին ընթացքում արտակարգ դեպքերի հետևանքով մարզին հասցված նյութական վնասը կազմել է 907 մլն. 276 հազ. 190 դրամ (2020թ. նույն ժամանակահատվածում՝ արտակարգ դեպքերի հետևանքով նյութական վնասը կազմել էր 2 մլրդ. 968 մլն. 538 հազ. 591 դրամ): Նյութական վնասը **նվազել է** 2 մլրդ. 061 մլն. 262 հազ. 401 դրամով, կամ 69,4 %-ով:

Մարզում տեղի ունեցած արտակարգ դեպքերի վերաբերյալ վարչությունը մշտապես տեղեկատվություն է ստանում մարզային ճգնաժամային կառավարման կենտրոնից: Բոլոր այն դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունները, որոնց հետևանքների վերացմանը անմիջական մասնակցություն կարող են ունենալ մարզպետարանը, մարզային ենթակայության կազմակերպությունները կամ մարզի տեղական ինքնակառավարման մարմինները, անմիջապես փոխանցվում են մարզպետին:

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

- Կազմվել և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն է ներկայացվել (N 01//10386-2021, 27.12.2021թ.) ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ում 2022 թվականի ուսումնական տարում ՀՀ Շիրակի մարզի ղեկավար աշխատողների և մասնագետների պատրաստման պլանը:
- 2021 թվականի հունվարի 20-ին կազմակերպվել և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ու մարզպետարանի համապատասխան պաշտոնատար անձանց մասնակցությամբ անցկացվել է ՓԾ Շիրակի մարզային փրկարարական վարչության 2020 թվականի տարեկան հաշվետվության ներկայացումը:
- ՀՀ Շիրակի մարզում բնակչության պաշտպանության, հնարավոր արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հետևանքների վերացման, պատասխանատու կազմակերպությունների միջև փոխհամագործակցված աշխատանքների ապահովման նպատակով մշակվել են ՀՀ Շիրակի մարզպետի մի շարք որոշումների նախագծեր, մասնավորապես՝

- «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում 2021 թվականի գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների մասին» 2021 թվականի մարտի 12-ի թիվ 73-Ա որոշում,
- Առափիի սողանքի կտրուկ ակտիվացման դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը թեմայով մարզի տարածքում շտաբային ուսումնավարժության անցկացման վերաբերյալ 2021 թվականի մարտի 31-ի թիվ 85-Ա որոշում,
- «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման Շիրակի մարզային հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» ՀՀ Շիրակի մարզպետի 2012 թվականի փետրվարի 16-ի թիվ 41-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին 2021 թվականի մայիսի 18-ի թիվ 126-Ա որոշում,
- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում հրամանատարաշտաբային ուսումնավարժություն անցկացնելու մասին 2021 թվականի մայիսի 19-ի թիվ 128-Ա որոշում,
- «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ջրային տարածքներում ջրահեղձման դեպքերի կանխարգելման մասին» 2021 թվականի հունիսի 15-ի թիվ 154-Ա որոշում,

- «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի վտանգավոր տարածքներից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման մարզային պլանը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2013 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 323-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2021 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 260-Ա որոշում,

- Երկրաշարժի հետևանքով փլուզված շենքում որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպումը թեմայով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն անցկացնելու մասին 2021 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 292-Ա որոշում,

- Համաձայնեցման փուլում է գտնվում «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2022 թվականի հիմնական միջոցառումների պլանը հաստատելու մասին» ՀՀ Շիկաի մարզպետի որոշման նախագիծը,

- Արտակարգ իրավիճակներում ՀՀ Շիրակի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2021 թվականի հիմնական միջոցառումների պլանի համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզպետի որոշումներով մարզում անցկացվել են նախատեսված բոլոր շտաբային, հրամանատարաշտաբային և ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժությունները:

- Մի շարք ուսումնական հաստատություններում անցկացվել են «Պատսպարման կազմակերպումը «Օդային տագնապ» ազդանշանի դեպքում», «ԱԻՆ գործառույթները և խնդիրները բնակչության պաշտպանության բնագավառում» թեմաներով հատուկ տակտիկական ուսումնավարժություններ, քաղաքացիական պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ ուսումնական հաստատություններում կազմակերպվել և անցկացվել են դասախոսություններ ու վարժանքներ: Պլանով նախատեսված 156 միջոցառումները ՀՀ Շիրակի մարզում իրականացվել են ամբողջությամբ:

- 2021 թվականի ընթացքում առկա և հեռավար կարգով կազմակերպվել է քաղաքացիական պաշտպանության Շիրակի մարզային ծառայությունների շտաբների պետերի հրամանատարական պատրաստության պարապմունքներ՝ Շիրակի մարզային փրկարարական վարչության մասնագետների մասնակցությամբ:

-Բաժնի անմիջական աջակցությամբ ճշգրտվել և մարզպետի որոշմամբ հաստատվել են քաղաքացիական պաշտպանության Շիրակի մարզային թվով 9 ծառայությունների պլանները:

-2021 թվականի գարնանային հնարավոր վարարումների և սելավների ռիսկերից ՀՀ Շիրակի մարզի բնակավայրերը, տնտեսական արժեք ներկայացնող տարածքները, գյուղատնտեսական հողատեսքերն ու բնակչության գույքը պաշտպանելու նպատակով անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու համար՝ ղեկավարվելով ՀՀ Շիրակի մարզպետի 2021 թվականի մարտի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում 2021 թվականի գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների մասին» թիվ 73-Ա որոշմամբ և համաձայն ՀՀ Շիրակի մարզպետի կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում 2021 թվականի գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների» ծրագրի՝ մարզի 10 համայնքի 61 բնակավայրերում իրականացվել են ծրագրով նախատեսված սելավատարների մաքրման աշխատանքներ: Ընդամենը մարզում մաքրվել է **18 կմ** երկարությամբ սելավատար և թվով **261** դիտահոր:

Միաժամանակ, համայնքների ղեկավարներին տրամադրվել է (N 01//02188-2021, 12.03.2021թ.) նաև 2021 թվականի գարնանային հնարավոր վարարումների և սելավների ռիսկերից ՀՀ Շիրակի մարզի բնակավայրերը, տնտեսական արժեք ներկայացնող տարածքները, գյուղատնտեսական հողատեսքերն ու բնակչության գույքը պաշտպանելու նպատակով անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումների իրականացման վերաբերյալ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից ներկայացված տեղեկատվությունը՝ համայնքի տարածքում անհրաժեշտ կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու՝ հեղեղատարների և սելավատարների հուների հեղեղավտանգ հատվածների մաքրման և ափապաշտպան կառույցների ամրացման վերաբերյալ:

Գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելմանը և դրանց հետևանքների նվազեցմանն ուղղված աշխատանքների վերլուծման և ամփոփման նպատակով, համապատասխան համայնքապետարաններից շաբաթական պարբերականությամբ հավաքագրվել են անհրաժեշտ տեղեկատվություններ և փոխանցվել ՓԾ Շիրակի մարզային փրկարարական վարչություն:

- Կարևորելով քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումներում բնակչության ազդարարումը՝ բաժնի համակարգմամբ մարզի 42 համայնքների թվով 44 բնակավայրերում կազմակերպվել և սարքին վիճակի են բերվել չաշխատող էլեկտրաշչակները, ինչպես նաև տեղադրվել են նորերը: Մարզում տեղադրված են և գործում են 65 էլեկտրաշչակներ:

Ընդհանուր առմամբ Շիրակի մարզին անհրաժեշտ թվով 159 էլեկտրաշչակներից առկա է թվով 65 էլեկտրաշչակ, որոնք գտնվում են սարքին վիճակում: ՓԾ կողմից Շիրակի մարզային փրկարարական վարչությանը տրամադրվել է մեկ Ս-40 տիպի եռաֆազ էլեկտրաշչակ, որը նախատեսվում է տեղադրել Գյումրու նորակառույց ՀՓՁ-ի շենքի տանիքին: Շչակի տեղադրման և մոնտաժման աշխատանքները ավարտելուց հետո էլեկտրաշչակը որպես միավոր կհաշվառվի և կընդգրկվի մարզի շչակների ընդհանուր ցուցակում:

Ազդարարումն առավել օպերատիվ իրականացնելու նպատակով, համայնքների ղեկավարներին առաջարկվել է էլեկտրաշչակների տեղադրման վայրերում սահմանել շուրջօրյա հերթապահություն կամ դրա անհնարինության դեպքում էլեկտրաշչակները տեղափոխել այլ վայրեր, որտեղ ապահովված է շուրջօրյա հերթապահություն:

- Համապատասխան աջակցություն է ցուցաբերվել մարզային ենթակայության կազմակերպությունների, համայնքների, համայնքային ենթակայության կազմակերպությունների

(մանկապարտեզներ, երաժշտական դպրոցներ, սպորտային կազմակերպություններ) կողմից քաղաքացիական պաշտպանության պլանների և պլան-ժամանակացույցների մշակման և լրամշակված տարբերակները ՓԾ Շիրակի մարզային փրկարարական վարչության համաձայնեցմանը ներկայացնելու հարցում:

Հետևողական աշխատանք է տարվել մարզի համայնքների և ուսումնական հաստատությունների աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) պլանների ճշգրտման և լրամշակման աշխատանքները ժամանակին իրականացնելու և ՓԾ Շիրակի մարզային փրկարարական վարչության համաձայնեցմանը ներկայացնելու ուղղությամբ:

Համայնքների ԱՌԿ միջոցառումների 2020 թվականի տարեկան պլան-ժամանակացույցով համայնքներում նախատեսված և իրականացված միջոցառումների կատարման վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն է հավաքագրվել ու ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (N 01//00603-2021, 27.01.2021թ.):

Տարվա ընթացքում համայնքների ղեկավարների ուշադրությունը մշտապես հրավիրվել է շենքերի մուտքերի մոտ տեղադրված բնակչության տարահանման ուղղությունների և պատսպարման վայրերի վերաբերյալ ցուցանակների առկայությունն ապահովելուն և բացակայության դեպքում առաջարկվել է տեղադրել նորերը:

Մեր առաջարկությամբ համայնքների ղեկավարների կողմից աջակցություն է ցուցաբերվել ՓԾ Շիրակի մարզային փրկարարական վարչության ենթակա ստորաբաժանումների անձնակազմերին՝ համայնքներում համապատասխան շինությունների նկուղների ուսումնասիրություններն իրականացնելու ընթացքում. ուսումնասիրություններն իրականացվել են համատեղ:

ՀՀ-ում հայտարարված ռազմական դրության շրջանակում, մինչև 2021 թվականի մարտի 24-ը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ամենօրյա պարբերությամբ ներկայացվել է տեղեկատվություն՝ ՀՀ Շիրակի մարզի համայնքներում կցագրված բնակչության պաշտպանական կառույցների մաքրման և շահագործման հանձնելու վերաբերյալ:

- Հրդեհավտանգ ժամանակահատվածներում համայնքների ղեկավարներին առաջարկվել է գործուն միջոցներ ձեռնարկել համայքում համապատասխան կանխարգելիչ միջոցառումների իրականացման ուղղությամբ, մշտապես պատրաստ վիճակում ունենալ պահեստավորված ջրային պաշարներ, իսկ խոտածածկ տարածքներում հրկիզումներ իրականացնել միայն ՓԾ Շիրակի մարզային փրկարարական վարչության համապատասխան մասնագետների համաձայնությամբ և վերահսկողությամբ:

- ԱՄՆ եվրոպական հրամանատարության, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության ռազմական համագործակցության գրասենյակի և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աջակցությամբ Գյումրիում կառուցվել, Ախուրյանում վերակառուցվել և 2021 թվականի սեպտեմբեր ամսին շահագործման են հանձնվել նոր ՀՓՋ-ների շենքերը, իսկ Աշոցքի ՀՓՋ-ի շենքի հիմնանորոգումն ընթացքի մեջ է:

- Պարբերաբար կատարվել են ոլորտին վերաբերող նաև այլ տեղեկատվությունների հավաքագրման, մշակման ու ՀՀ վարչապետի աշխատակազմ, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն և այլ պետական մարմիններ ներկայացնելու աշխատանքներ:

- Վարչության աշխատակիցները ընդգրկվել են 2021 թվականին մարզում տեղի ունեցած բնական աղետների (կարկտահարություն, ուժեղ քամի, երաշտ) պատճառով տուժած՝ թվով 17 համայնքում վնասների չափերն ուսումնասիրող աշխատանքային խմբերում:

Հայաստանի Հանրապետությունում «ՋԱՅԿԱ» միջազգային համագործակցության գործակալության հետ համատեղ իրականացվող «ՀՀ-ում սողանքային աղետի կառավարում»

ծրագրի շրջանակներում ՇՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի կողմից հետևողական աշխատանքներ են իրականացվել «Իրական ժամանակում սողանքի մշտադիտարկման համակարգ»-ով, համակարգիչների միջոցով Առափի համայնքի սողանքի գոտուց տվյալների ստացման և ՓԾ տեղեկատվության փոխանցման ուղղությամբ:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

ՀՀ Շիրակի մարզպետարանի, ՀՀ պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Շիրակի մարզի տարածքային ստորաբաժանման, ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության, ՀՀ ՊՆ Շիրակի կայազորի ռազմական ոստիկանության և ՀՀ Շիրակի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցված աշխատանքների արդյունքում ապահովվել են 2020 թվականի ձմեռային և 2021 թվականի ամառային զորակոչերի կազմակերպման ու անցկացման աշխատանքները: 2021 թվականի ամառային զորակոչի շրջանակներում, մարտի 3-ին և 30-ին, հուլիսի 12-ին և 28-ին անցկացվել են ՀՀ Շիրակի մարզային զորակոչային հանձնաժողովի նիստեր, քննարկվել են տարկետման ներկայացված թվով 194 զորակոչիկների անձնական գործեր: 2021 թվականի ձմեռային զորակոչի շրջանակներում, 2021 թվականի դեկտեմբերի 28-ին անցկացվել է ՀՀ Շիրակի մարզային զորակոչային հանձնաժողովի նիստ, քննարկվել են տարկետման ներկայացված թվով 144 զորակոչիկների անձնական գործեր (զորակոչը մեկնարկել է 2021 թվականի դեկտեմբերի 20-ին. դեկտեմբերի 28-ի դրությամբ զորակոչվել են 124 քաղաքացի):

ՀՀ Շիրակի մարզային զորակոչային հանձնաժողովի նիստերի քննարկումների արդյունքում տրված եզրակացությունները սահմանված կարգով ու ժամկետներում ուղարկվել են ՀՀ պաշտպանության նախարարություն (N 01//01864-2021, 04.03.2021թ., N 01//02803-2021, 30.03.2021թ., N 01//06000-2021, 14.07.2021թ., N 01//06473-2021, 29.07.2021թ., N 01//10473-2021, 28.12.2021թ.,):

Մինչև մարզային զորակոչային հանձնաժողովի նիստի հրավիրումը, բաժնի կողմից մանրակրկիտ ձևով ուսումնասիրվում են բոլոր զորակոչիկների անձնական գործերը և թերություններ հայտնաբերելու դեպքում մարզպետարան են հրավիրվում Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Շիրակի մարզի տարածքային ստորաբաժանման համապատասխան պատասխանատուները, կազմակերպվում է քննարկում և առաջարկվում է սեղմ ժամկետներում շտկել արձանագրված թերությունները:

Իրավասու մարմինների համագործակցված աշխատանքների արդյունքում 2020 թվականի ձմեռային զորակոչի առաջադրանքը կատարվել է 95.0%, իսկ 2021 թվականի ամառային զորակոչի առաջադրանքը՝ 125.5%:

Մշտապես ապահովվել է զորակոչիկներին ՀՀ պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Շիրակի մարզի տարածքային ստորաբաժանումից դեպի հանրապետական հավաքակայան ուղարկման պլան-գրաֆիկների տրամադրումը ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչությանը և վերջիններիս կողմից զորակոչիկների ուղեկցումը:

- Համապատասխան հսկողություն է սահմանվել ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից վերահսկվող կազմակերպություններում այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնողների ու այդ կազմակերպությունների նկատմամբ՝ ծառայությունն օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպելու նպատակով:

Այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի 2021 թվականի մարտի 24-ի եզրակացության հիման վրա՝ օրենքով սահմանված կարգով, կազմակերպվել է ծառայության ուղարկված 1 քաղաքացու այլընտրանքային աշխատանքային ծառայությունը, 2021 թվականի փետրվարի 1-ին և օգոստոսի 10-ին ծառայությունն ավարտել ու պահեստ է արձակվել 2 այլընտրանքային աշխատանքային ծառայող: Ներկայում այլընտրանքային աշխատանքային ծառայության մեջ է գտնվում թվով 3 քաղաքացի:

- 2020 թվականի սեպտեմբերի 27-ից առ այսօր, ռազմական դրությանն առնչվող գործառույթների կատարումից բացի, իրականացվել են զինծառայողների հարազատների ընդունելության, օպերատիվ լուծումներ պահանջող խնդիրների լուծման ապահովման աշխատանքներ: Մասնավորապես, մշտապես կապ է ապահովվել Հանրապետության տարբեր բնակավայրերի համապատասխան հաստատությունների հետ՝ Շիրակի մարզի զոհված զինծառայողների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ ստանալու նպատակով: Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության հետ համատեղ, օպերատիվորեն ապահովվել է Շիրակի մարզի զոհված զինծառայողների տեղափոխումը Գյումրի՝ ՀՀ տարբեր մարզերից և Երևան քաղաքից:

ՏԻ և ՀԳՄՀ վարչության անմիջական համակարգմամբ, մարզի համապատասխան համայնքների մասնակցությամբ կազմակերպվել և ապահովվել են զոհված զինծառայողների՝ դիահերձման, սգո պարագաների հատկացման, զոհվածի մարմնի (աճյունի) գերեզմանատուն տեղափոխման, հուղարկավորության և ցուցատախտակի տեղադրման, ճանապարհային ոստիկանության կողմից ուղեկցման, պատվո պահակի և զինվորական նվագախմբի ներկայության ապահովման, ինչպես նաև կազմակերպական այլ աշխատանքներ: Նշված աշխատանքներին զուգահեռ, իրականացվել են ՀՀ Շիրակի մարզի զոհված, անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների հաշվառման, նրանց ընտանիքներին, ինչպես նաև վիրավորում ստացած և հաշմանդամության խումբ ձեռք բերած զինծառայողներին «Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամի կողմից տրամադրվող հատուցումների համար անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրման, ամփոփման և վերջնական փաթեթները ՀՀ պաշտպանության նախարարությանը տրամադրելու աշխատանքներ:

ՀՀ պաշտպանության նախարարի 2021 թվականի նոյեմբերի 26-ի N1398 հրամանով, ՀՀ պաշտպանության նախարարության հետ սերտ համագործակցության, բանակ-հասարակություն կապի ամրապնդման գործում ունեցած ներդրման, 44-օրյա պատերազմի ընթացքում թիկունքային աշխատանքներում ցուցաբերած պատասխանատու վերաբերմունքի համար Վարչության պետի տեղակալը պարգևատրվել է «Գարեգին Նժդեհ» մեդալով (դեռ չի հանձնվել):

- Կամավորության սկզբունքով ձևավորվող աշխարհազորի կազմավորման նպատակով այցելություններ են եղել մարզի գրեթե բոլոր համայնքներ, այդ աշխատանքների կազմակերպման ուղղությամբ տեղական ինքնակառավարման մարմիններին ցուցաբերվել է հնարավոր աջակցություն:

- Զինվորական հաշվառման ընթացիկ աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու, համայնքներում զինապարտ քաղաքացիների հաշվառումը պատշաճ կարգով իրականացնելու նպատակով մարզի համայնքների ղեկավարներին և համայնքապետարանների համապատասխան աշխատակիցներին մշտապես ցուցաբերվել է անհրաժեշտ աջակցություն:

- Իրավասությունների սահմաններում աշխատանքներ են տարվել մարզում տեղակայված ՀՀ ՊՆ ստորաբաժանումների, Գյումրիում տեղակայված ՌԴ սահմանապահ զորամասի, ՌԴ 102-րդ ռազմաբազայի, մարզպետարանի և մարզի տեղական ինքնակառավարման մարմինների միջև արդյունավետ համագործակցության ապահովման ուղղությամբ: Պաշտպանության ոլորտին վերաբերող մի շարք աշխատանքային հանդիպումներ և քննարկումներ են եղել ինչպես մարզպետարանում, այնպես էլ նշված զինվորական կառույցներում:

- 2021 թվականի հունվարի 28-ին ՀՀ զինված ուժերի կազմավորման 29-ամյակի կապակցությամբ Գյումրիում տեղակայված ՀՀ ՊՆ N զորամասում անցկացվել է հադիսավոր միջոցառում, որի ընթացքում, «Բանակ-հասարակություն» կապի ամրապնդման և մարզային նախաձեռնություններին ակտիվ մասնակցության համար ՀՀ Շիրակի մարզի 3 զորամասերի թվով 3, ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Շիրակի մարզի տարածքային ստորաբաժանման թվով 3 ծառայողներ և ՀՀ Շիրակի կայազորի զինվորական դատախազության մեկ աշխատակից պարգևատրվել են ՀՀ Շիրակի մարզպետի շնորհակալագրերով:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության, ճանապարհային ոստիկանության ստորաբաժանումների հետ համագործակցված աշխատանքի արդյունքում ապահովվել է մարզում անցկացված մի շարք հանրային նշանակության և մարզական միջոցառումների, բողոքի ակցիաների ժամանակ հասարակական կարգի պահպանությունը: Նշված ստորաբաժանումների հետ մշտական համագործակցություն է ապահովվել նաև զորակոչային աշխատանքների կազմակերպման, զորակոչիկներին հավաքակայան ուղեկցման, զորակոչային առաջադրանքների ապահովման ուղղությամբ:

ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔԵՐ

Վարչությունում իրականացվել են ՀՀ Շիրակի մարզպետին հասցեագրված, ինչպես նաև ՀՀ վարչապետին և պետական կառավարման այլ մարմիններին հասցեագրված և ՀՀ Շիրակի մարզպետարան վերահասցեագրված հանձնարարականների, գրությունների, դիմումների ու այլ

փաստաթղթերի քննարկումներ, ուսումնասիրություններ ու պատասխան գրությունների նախապատրաստման աշխատանքներ: Հաշվետու ժամանակահատվածում միայն «Mulberry» համակարգում արձանագրվել է ավելի քան **5900** գործի (փաստաթղթի) վերաբերյալ աշխատանքների կատարում՝ առանց որևէ բաց թողնված ժամկետների:

Վարչության պետի տեղակալի կողմից, որպես փոխարինող, իրականացվել են նաև գաղտնի գործավարության վարման աշխատանքներ՝ պատասխանատուի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածներում:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ՏԻ ԵՎ ՀԳՄՀ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱՐԱՄ ԱՆՏՈՆՅԱՆ